

Ինչպէս որ կը տեսնուի, Խնամակալութիւնը Կ. Պոլսի ուրիշ եկեղեցիներու թղկն. Խորհուրդներուն պէս չէ՛ ընտրուած. վասն զի՝ ընտրութիւն կատարելու համար Ս. Լուսաւորիչ թաղային յարմար բնակչութիւն մը չունի. ասկից զատ Ս. Լուսաւորիչ՝ Կ. Վարժարանի եւ յարակից բաժիններու շինութեան, եւայլն, մեծ պարտքեր ունեցած է, այնպէս որ մէկ կողմէն այդ պարտքերը վճարելու կարող, միւս կողմէն կեդրոնականը վարելու, ինչպէս նաեւ Եկեղեցւոյ պէտքերը մատակարարելու յարմար մարմին մը պէտք էր: Մաղաքիս Պատրիարք՝ յաջողեցաւ գտնել այդ մարմինը նախ այդ երեքութեամբ, որ ետքը, ինչպէս ըսինք, ուժաւորուեցաւ հինգ անձերով եւ փոխադարձ հաւանութեամբ:

Խնամակալութեան Դիւանը կը կազմեն Իսսեան՝ Արեւադէ, Մուրատեան՝ Արեւադէ, Հարէնց՝ Գանձադէ:

Խնամակալութիւնը, ուրեմն, 1896էն մինչեւ հիմայ երբ այս տողերը կը գրեմ (1903 Նոյեմբեր) անշուշտ կը պաշտօնավարէ. այսինքն՝ թէ՛ պարտք կը վճարէ, թէ՛ Կ. Վարժարանի դպրոցավարչական եւ մատակարարական հոգերը կը բառնայ, թէ՛ Եկեղեցւոյն կը նայի եւ այս բոլոր գործերը լարելու եւ վարելու համար՝ Ս. Լուսաւորչի հասոյթներուն եւ անոնց աղբիւրներուն վրայ կը հսկէ:

Մինչեւ հիմայ գրեթէ 2000 ոսկի պարտք տուած է եւ դեռ ունի կարգադրելիք հաշիւներ կամ իրաւախոհութիւններ: Մատակարարական յայտնի արդիւնք մը, որ պատիւ կը բերէ Խնամակալութեան:

Կեդրոնական Վարժարանի համար Խնամակալութեան ջանքերը չափազանց են. փափաքելի է որ իր նախկին համբաւին տիրանայ այդ հաստատութիւնը՝ իր ներքին եւ արտաքին փայլով, եւ տիրանայ մանաւանդ աւելի ամուր, հետեւաբար մեր պէտքերուն աւելի յարմար իրական համբաւի մը: